## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ. - *Հայոց Եկեղեցու Յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ. Էջմիածին* 1908 *տպ. Մայր Աթոռոյ. գին* 1 *ր.* 50 *կ.*։

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԳՕ. - *Էռնանի (թրգմ. Յակոբ Տէր-Գէորգեան). հրատ. Բագուի Հայոց Հրատկչ. Ընկերութեան* N. 4. *Բագու* 1908. *տպ. «Տրուդ». գին* 60 *կ.*։

Ա. ՋԱՆԵԱՆ. - *Բացւող Ծաղիկներ. տպ. (տես վերը). գին* 50 *կ.*։

— *Կեանքի Գարունքին. տպ. (տես վերը). գին* 25 *կ.*։

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ (ՍԻԱՄԱՆԹՕ). - *Հայորդիները, Բ տպ. Առաջին և Երկրորդ շարքերու. Պոլիս* 1908. *հրատկ. Հայ Յեղափոխական Դաշնակցութեան. գին* 5 *ղրշ.*։

— *Խրիմեան Հայրիկ. Ռուսահայաստանի Նահատակներու Յիշատակին*։

ԺԻՒԼ ՎԵՐՆի *Գրանտ Նաւապետի Որդիքը. Մասն Բ (Պատանեկան Գրադարան* N. 10). *Բագու* 1908 *գին* 30 *կ.*։

— *Շարունակութիւն վերնոյն* N. 10. *գին* 30 *կոպէկ*։

ԲԺԻՇԿ ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ. - *Դպրոցների Նիւթական - Գրամական Ապահովութեան Հարցը. I Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների Եկամտի Աղբիւրները (պաշտօնական Ցանկը և Ցայսօր անտես առնուածը). Մոսկուա* 1908. *տպ. Էլեկտր. Ե. Աւետիքեանի. գին* 50 *կ.*։

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ. - *Մթնշաղ. քերթուածներ* 1906-07. *Պոլիս* 1908. *տպ. Զ. Ն. Պէրպէրեան. գին* 4 *ղրշ.*։

— *Գիշերէն վերջ (քերթուած).* 1908։

— *Անոնց Հոգեհանգիստը (քերթուած)* 1908։

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԵԱԵԱՆ. - *Սրմսարը. վէպ. Փարիզ* 1908. *տպ. Ներսէսեան. գին* 1 *ֆր.*։

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ ԵՒ Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ. - *Դասագիրք պատմութեան. Նախապատմական Մարդը և Հայկական Առասպելներ. Թիֆլիս* 1908. *տպ. «Էպոխա». գին* 50 *կ.*։

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ. - *Նպաստից Ցանձնաժողով, Հաշուեցուցակ և Տեղեկագիր* 1897-1908։

M. H. Ananikian. — Armenia. Extract from Dictionary of Religion etc. by James Hast.


### «ԱՒԵԼ»

*Զ ա ւ ե շ տ ա թ ե ր թ*

Բաժանորդագինն է

| Եգիպտոսի համար | Արտասահմանի համար |
| --- | --- |
| 24 թիւ 20 ղրշ. ոսկ. | 24 թիւ 5 ֆր. |
| 12 » 10 » » | 12 » 3 » |

Հասցէ

Rédaction de la Revue

« AVEL »

B. P. N°. 1327 CAIRE



### « ՊԱՅՔԱՐ »

Լրագիր Ազգային, Գրական, Քաղաքական և Տնտեսական

Բաժանորդագինն է

| | | | |
| --- | --- | --- | --- |
| Կ. Պոլսոյ | համար | տարեկան | 30 ղրշ. |
| » | » | վեցամսեայ | 15 » |
| Գաւառներու | » | տարեկան | 35 » |
| » | » | վեցամսեայ | 20 » |
| Արտասահմանի | » | տարեկան | 10 ֆր. |

Հասցէ

Rédaction du journal Arménien

« Baïkar »

Korassandjan Han Canstantinople



### ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1908 *թ.*

### „ՄԵՐ ՁԱՅՆԸ"

Հասարակական, Գրական եւ Քաղաքական օրաթերթ

Բաժանորդագինն է

Տարեկան 6 ր. - Արտասահման 10 ր.

Գրել

Rédaction du Journal « Mer Dzaïn »

(Russie) NACHITCHEVAN

*(Sur Don)*



### «ՆԷՃԱԹ-Ը-ՄԻԼԼԷԹ»

Թուրքօ-Հայ Օրկան

*Օսմանեան հայրենիքին քաղաքական, ընկերական, և տնտեսական կենսական շահերուն*


digitised by A.R.A.R.@

# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ

## 1909 տարի

Կատարեցինք տնա խոստումը ոգտաշատ նիւթ մատակարարելով գեղարուեստական և գրական ճաշակներու։ Հասարակութիւնը պիտի գտնէ անոր առաջին էջին վրայ օրուան սուրբերէն վերջ՝ նոյն օրը մեռած կամ ծնած նշանաւոր դէմք մը՝ իր կենդանագրով. քովը՝ իր կամ իրեն արուեստին յարմար գեղեցիկ խօսք մը։ Երկրորդ էջին վրայ՝ վարքը և անոր երկերը՝ համառօտ, պարզ և ամբողջական, բացատրելով միանգամայն անոր մատենագրական և գեղարուեստական գլխաւոր յատկութիւններն և արժանիքը։ Օրացոյցէս դուրս չենք թողած զուարճալի և գիտական առանձին կտորներ ալ, որոնց կարճ ժամանցն իսկ հաճոյք կը պատճառէ։ Գլխաւորապէս տեղ բռնած են հոն Նկարչութիւնը, Քանդակագործութիւնը և Միջազգային Մատենագրութիւնը։

Հայ Նշանաւոր դէմքերուն մէջէն զանց ըրած ենք այն անձինքները, որոնք դեռ գործունէութեան ասպարէզին մէջն են։ Արդի թագաւորներու դէմքերն ու կենսագրականներն ալ դրած ենք իր գահակալութեան կամ ծննդեան օրը, ինչպէս նաև միջազգային քաղաքական տօները։ Մեր երկտողէն աւելի շատ և որոշ գաղափար մը պիտի տայ օրացոյցին հետևեալ երկու էջերը, զորս իբր օրինակ կը տպենք հոս։

Պատկերազարդ Պատի Օրացոյցը կը բաղկանայ 730 էջէ։

| | | |
|---|---|---|
| | Գինն է. | Ֆր. |
| 10 | օրինակը . | 10, — |
| 25 | » | 22, 50 |
| 50 | » | 40, — |
| 100 | » | 75, — |

---

## ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ՏԱԽՏԱԿԸ

Պատի օրացոյցի համար խնամքով պատրաստած ենք նաև յատուկ տախտակ՝ սակաւաթիւ օրինակներ։ Այս տախտակը յոյժ շքեղ և գեղարուեստական գործ է 50 × 30 հարիւրամետր մեծութեամբ, ոսկի կամ արծաթի զարդերով։ Տախտակը կը գեղազարդէ հայ պատմութեան անմահ հերոսներու՝ Աւարայրի Դիւցազներու մեծադիր բազմագունի պատկերը։ Այս տախտակը կարելի է ստանալ ուղղակի մեզմէ, գինն է Ֆր. 2,50 կամ 1 րուբլի։

Դիմել մեր հասցէին

*Imprimerie Arménienne*

St. LAZARE — VENISE (Italie)

digitised by A.R.A.R.@

# 12

## 25

### ԿԻՐԱԿԻ

Դ՜. Գ. և ԺԵ. օր յինանց։
Աշխարհամատրան կիւրակէ։




*Մարդկային ստորութիւններից ամենավատը դաւաճանութիւնն է.*

*(Րաֆֆի)*

ԳԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻՆ ՆՄՈՅՇ ՄԸ

## ՐԱՖՖԻ

*Պարսկահայ նշանաւոր վիպասան, ծն. Սալմաստի փայաջուկ գիւղին մէջ. 17 տարեկան Թիֆլիս եկաւ համալսարան մտնելու համար։ Իր ըրած ճամբորդութիւնները Դավրէժ, Մուշ, Վան՝ ծնունդ պիտի տային իր երկերուն, որոնց մէջ պիտի նկարագրուէին ընկճուող հայի մը կեանքը, միանգամայն «կայծեր» պիտի դրուէին ընթերցողներու սիրտը։ Միշտ անմոռանալի պիտի մնան իր վէպերը, Կայծեր, Դաւիթ Բէկ, Խենթ, Սամուէլ, ևն. որոնք մէկ մէկ գլուխ գործոցներ են։ Րաֆֆի այս իր գործերուն մէջ բոլորովին վիպասան է, ինքնաճանաչ վիպասան, որ լաւ գիտէ թէ ինչ կը նշանակէ իր գրչի իւրաքանչիւր շարժումը։ Նա կը մնայ ռուսահայ մեր առաջին վիպասանը։*

---

### Գերմանական քայլերգը

*Հայլ տիր իմ Զիկըրքրանց էն. երգը, զոր շարադրած է Հոլշթայնի մէջ Հէնրիկ Հարրի՝ Տանիմարքայի Քրիստիան Է.ի ծննդեան առթիւ, հրատարակուեցաւ 1790 յունուար 27ին Ֆլէնսպուրկի շաբաթաթերթին մէջ՝ որպէս զի երգուի անգղ. Կօտ սէյվ ասըս Լորտ տըր Քինկ երգի եղանակով։ Նախ 8 տուն էր, յետոյ 5ի վերածուեցաւ, ու վերջապէս քիչ շատ Շումախէրէ փոփոխուեցաւ Բրուսիայի համար։ Վերջին ձեւը հրապարակ ելաւ 1793ին ու մնաց իբր ազգային երգ։*

digitised by A.R.A.R.@